ԵՐՎԱՆԴ ԳՐԵԿՅԱՆ

ՈՒԱՈՒՇԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ
(պատմա–համեմատական վերլուծություն)

Ուրարտական պետության ռազմա–քաղաքական պատմության կարևորագույն դրվագներից է ուրարտա–ասորեստանյան հակամարտության բարձրակետ դիտվող, ասորեստանյան արքա Սարգոն II–ի կողմից մ. թ. ա. 714 թ. ձեռնարկված արշավանքը դեպի Ուրարտու: Պատմագրության մեջ այն հայտնի է Սարգոնի «VIII տարվա արշավանք» անվամբ: Դրա մանրամասն նկարագրությունը մեզ է հասել Աշշուր աստծուն ուղղված զեկույցի տեսքով՝ արքունի մեծ դպիր Նաբու–շալլիմ–շումուի հեղինակությամբ:

Արշավանքի կարևորագույն դրվագներից է հակառակորդ բանակների բախտորոշ հանդիպումը յուրահատուկ մարտավայրի վերածված Ուաուշ լեռան փեշերին: Ուաուշի ճակատամարտը հայտնի է իր շրջադարձային նշանակությամբ՝ ինչպես արշավանքի հետագա ընթացքի, այնպես էլ երկու տերությունների համար. այն մեծապես պայմանավորեց նրանց անցնելիք պատմության հետագա ուղին:

Ասորեստանյան աղբյուրը պահպանել է ճակատամարտի դրվագների սուղ նկարագրություն՝ շաղախված ասորեստանյան արքայի, նրա տերության և աստվածների հզորությունը փառաբանող զանազան պատկերավոր արտահայտություններով: Այնուամենայնիվ, դա բավարար է համարվել առաջարկելու ճակատամարտի մի քանի վերակազմություններ: Նման փորձ են կատարել Հ. Ու. Ֆ. Սագսը, Կ. Լ. Հովհաննիսյանը, ճակատամարտի ընթացքի երկու վերակազմություն է առաջարկել Ջ. Բ. Սմիթը[4]:

Ուաուշը, մեր համոզմամբ, չի պատկանում ճակատամարտերի այն շարքին, որոնց ելքը վճռում էր այս կամ այն կողմի թվական գերազանցությունը, ռազմական առավել կազմակերպվածությունը, զինվածությունն ու զինվորների քաջությունը: Մարտի ելքը վճռել է այն վարելու հմտությունը, պարտադրված տեղանքը հակառակորդի դեմ օգտագործելու կարողությունը: Այս առումով Ուաուշը հանդիսանում է ասորեստանցիների փայլուն իրագործած ռազմական գործողություն:

Ասորեստանյան բանակը.

Մասնագիտական գրականության մեջ որոշակիորեն լուսաբանված են ասորեստանյան բանակին, նրա զորատեսակներին, կազմավորմանը, զինվածությանը, սեպագիր աղբյուրներից հայտնի ռազմական տերմինների ստուգաբանությանն ու նմանատիպ հարցերի վերաբերող ոլորտներ[5]: Մեր խնդիրը չէ դրանց վերարծարծումը, ուստի և հարցին անդրադառնում ենք ըստ անհրաժեշտության՝ վարձելով հստակեցնել մեր պատկերացումները Ուառուշում ասորեստանյան բանակի զորատեսակների, էքնիկ կազմի, հնարավոր թվաքանակի, զինվածության մասին նն:

Ուառուշի ճակատամարտը մղած ասորեստանյան բանակի զորատեսակներին վերաբերող տվյալները քիչ չեն: «Լուվրի աղյուսակի» տարբեր հատվածներում հիշատակվում են մարտակսաքեր (^{GIŠ}GIGIR$^{(MEŠ)}$ = narkabtu)[6], ասորեստանյան հեծելազորը (PIT.ḪAL.LU$^{(MEŠ)}$ = ^{LÚ}pēṯhallu)[7], բուն ասորեստանյան հետևակը (^{LÚ}kallāb/pu)[8], ոչ–ասորիսսանցիներից կազմված հետևակը (^{LÚ}zūku CÌR^{II} = ṣāb šēpē, zūk šēpē)[9], որոնց թվում՝ նետաձիգներ (ṣāb ^{GIŠ}BAN = ṣāb $^{(GIŠ)}$qašti)[10], տեգավորներ կամ նիզակակիրներ (nāš $^{(GIŠ)}$asmare)[11], որոնք երբեմն նույնացվում են վահանակիրների հետ (ṣāb $^{(GIŠ)}$aṛṛti), և պարսատիկավորներ (nāš $^{(GIŠ)}$kabābi)[12]: «Լուվրի աղյուսակում» աշխարհազորն արտահայտվել է sāb ḫub/psi[13], առաջապահ զինվորները՝ sagbū տերմինով[14]: Ընդհանրական նշանակությամբ են կիրառվել «ռազմի զինվորներ» (sāb taḫāzi), «ռազմիկներ»[15] (^{LÚ}qurādu) բառերը[16]: Ասորեստանյան բանակն ունեցել է սակրավորների և գումակավորների միավորումներ, առանձին խումբ են կազմել հետախույզները, տարբերակվել է արքայի թիկնապահ գունդը նն: Արշավանքին մասնակից ասորեստանյան զինվորների պատկերները կարելի է տեսնել Մուծածիրի նվաճումն ու կողոպուտը պատկերող բարձրաքանդակներում[17]:

Սարգոնյան դարաշրջանում ասորեստանյան բանակի հիմնական միավորն էր գունդը (kisru) ՝ գնդապետի (rab kisri) հրամանատարությամբ: Հիշատակվում են նաև խմբապետ (ներ) ի (rab urāti), հազարապետ (ներ) ի (rab 1. lim), հարյուրապետ (ներ) ի (rab 1. me'at), հիսնապետ (ներ) ի (rab ḫanše), տասնապետ (ներ) ի (rab eširti) գլխավորած միավորումներ[18]: Kisru–գնդի ճշգրիտ թվակազմը, սակայն, անհայտ է: Ասորեստանյան բանակի անձնակազմին վերաբերող ցուցակներից մեկի համաձայն առանձին զորահրամանատարների գլխավորած միավորումները կարող էին ունենալ 300–ից մինչև 4.100 զինվոր: Միավորումների հիմնական մասում նրանց թիվը տատանվել է 1.100–ից 1.500–ի սահմաններում (ցուցակում նշված զինվորների ընդհանուր թվաքանակը

կազմում է մոտ 34.000, ընդ որում, տեքստը պակասավոր է)[19]: Աղբյուրը չի նշում առանձին միավորումների անվանումները: Ուստի և դժվար է ասել՝ արդյո՞ք գործ ունենք kişru–գնդերի հետ, թե ոչ[20]: Համենայն դեպս, զինվորների՝ մեզ հայտնի առավելագույն քանակը, որն ընդգրկվել է kişru–ի կազմ, հասնում էր 1.119 մարդու[21]:

Ասորեստանյան զորամիավորումներից հիշատակվում է նաև pirru–ն: «Լուվրի աղյուսակի» վկայությամբ նման միավոր է առաջնորդել Ուառուշի ճակատամարտում Սարգոնի խորթ եղբայր (aḫu talīmu) և «մեծ նախարար» (SUKKAL.MAḪ = sukkalmaḫḫu) Սին–ախ–ուծուրը[22]:

Սարգոնյան ժամանակաշրջանի աղբյուրների համաձայն, sukkallu տիտղոսը կրող անձինք իրականացրել են զինվորական–հրամանատարական գործառույթներ՝ առաջնորդելով ասորեստանյան տերության տարբեր նահանգներից հավաքված զորքերի[23]: Դրանք, ըստ Կալխուից հայտնաբերված «Զիերի ցուցակի», տարբերակվել են այն զորքերից, որոնք հավաքագրվել էին բուն ասորեստանյան տարածքներից[24]: Այսպես կոչված «նահանգային զորքերը», որոնք ներկայացնում էին Ասորեստանին ենթակա և նրա կազմի երբեմնի անկախ էթնո–քաղաքական միավորների (Կարքեմիշ, Դամասկոս, Սամարիտ, արամեական, քաղդեական ցեղեր ևն), խիստ մարտունակ ուժեր էին՝ գրեթե ամբողջությամբ ոչ–ասորեստանցիներ: Ասորեստանյան իշխանությունները տերության արևմտյան տարածքների ռազմունակ, տեղաբնիկ կամ կիսաքոչվոր ցեղերի այս զինվորներին օգտագործում էին այլ ճակատներում՝ տեղավախելով նրանց, օրինակ, արևելյան սահմաններ: Զամուայի նահանգապետի հրամանատարած զորախմբում ոչ–ասորեստանցիները (800 հոգի՝ իթու'ա և քուրրա՞ ցեղերից) գերակշռել են ասորեստանցիներին (630 հոգի): Պատկերը նույնն էր բանակի այլ միավորումներում ևս: Նման կազմ է ունեցել, օրինակ, Զամուային սահմանակից Արզուխինա նահանգի զորախումբը, որի մասնակցությունը Սարգոնի «VIII տարվա արշավանքին» կարելի է ենթադրել: Մեզ հասած զեկուցագրի համաձայն (նրանում պահանջվում էր արագացնել զորքերի հավաքը), այն ունեցել է կառամարտիկներ (ERIM.MEŠ ša GIŠ.GIGIR), ասորեստանցի հետևակայիններ՝ kallāpu–զորքեր (^{LÚ}kallāpu) ևն, ինչպես նաև քուրրայցի (^{LÚ}qurrāyu) և իթու'այցի (^{LÚ}itu'āyu) զինվորներ[25]: Հայտնի է ասորեստանյան տերության արևելյան նահանգներում տեղաբաշխված զորքերի շարքում թաբալցիների առկայության մասին[26]: Ասորեստանյան զորահրամանատարներից մեկը՝ Շարրու–էմուրանին, որը, մեր կարծիքով, Սարգոնի «VIII տարվա արշավանքի» կապակցությամբ երեք անգամ հանդես է գալիս ասորեստանյան աղբյուրներում (տես ստորև), երամա-

նատարն էր «նահանգային զորքեր» ընդգրկող բավական նշանակալի միավորման[27]:

Այս փաստերը նկատի ունենալով, միանգամայն հնարավոր է թվամ Ուառուշի ճակատամարտին մասնակից ասորեստանյան բանակում տեսնել ոչ–ասորեստանցիներից կազմված զորքեր: Թերևս, նման կազմ են ունեցել pirru–միավորումները[28]: Վերջիններս, ի լրումն բուն ասորեսաանյան ուժերի, կազմում էին «արքայի զորքը»՝ ṣāb šarri–ն[29]:

Սին–ախ–ուծուրի հրամանատարած pirru–ն, որն Ուառուշի ճակատամարտի հիմնական դերակատարներից էր, կազմված էր, ամենայն հավանականությամբ, հետևակայիններից[30]: Ոչ–ասորեստանցիները, տվյալ դեպքում իքուայցի և քուրբայցի զինվորները, ընդգրկվել են գերազանցապես հետևակային միավորներում[31], մինչ օտար ծագման մարտակառքերն ու հեծելազորը, ինչը շեշտվում է աղբյուրներում, ներառվում էին արքայական գնդ(եր)ի՝ kisir šarrūti–ի կազմ[32]:

Նման փաստի հետ գործ ունենք նաև «Լուվրի աղյուսակում». Մուծածիրը նվաճելու համար բանակի հիմնական զանգվածից առանձնացված զորախմբում Սարգոնի առաջնորդած հեծելազորից բացի ընդգրկվել են նաև հետևակ զինվորներ, թերևս՝ նույն Սին–ախ–ուծուրի pirru–միավորումը:

Ի դեպ, ասորեստանյան աղբյուրները ուրարտական բանակի կազմավորումների թվում հիշատակում են և kiṣru–ն[33], և pirru–ն[34]: Քանի որ pirru–ն, ինչպես թվում է, կազմվել է էթնո–տարածքային սկզբունքով՝ ոչ–ասորեսաանցիներից, ապա ուրարտական բանակի համապատասխան միավորները, թերևս, ներկայացրել են տերությանը ենթակա կամ նրա կազմում գտնվող «երկրների» ուժերը:

Ինչ վերաբերում է Ուառուշում ասորեստանյան բանակի թվաքանակին, ապա այդ մասին ուղղակի տվյալներ չկան: Միայն ԼԱ, տող 320–ում նշվում է Սարգոնի գլխավորությամբ Մուծածիր շարժվող զորախմբում 1.000 հեծյալներ ընդգրկող միավորման առկայության մասին: Ուղեկից հետևակայիններին վերաբերող թվական տվյալներ աղբյուրը չի պարունակում: Հստակ չեն նաև տեղեկությունները արշավանքին մասնակից ասորեստանյան նահանգապետների մասին, թեև նրանք ներկայացված են աղբյուրում[35]:

Մենք կարող ենք ենթադրել, հիմնվելով արքունիք ուղարկված երեք զեկուցագրերի վրա, որ ասորեստանյան զորաբանակի կազմում են գտնվել, առնվազն, Արրապխա, Արզուխինա, Զամուս նահանգների զորամիավորումներն ու վերոհիշյալ Շարրու–էմուրաննիի գունդը[36]: Հետաքրքիր է, որ, զեկուցագրերից մեկի համաձայն, Շարրու–էմուրաննին շարժվել է դեպի Սումբի[37]՝ երկիր, ուր «VIII տարվա արշավանքի» սկզբնամասում զորահանդես է անցկացրել Սարգոնը[38]: Սումբին, ըստ

երևույթին, ընտրվել էր որպես զորքերի հավաքատեղի: Ամենայն հավանականությամբ, այս ուղղությամբ է շարժվել, ըստ երկրորդ զեկուցագրի, Արրապխայի նահանգապետը. Զաբ գետն անցնելուց հետո նպատակակետ, որի անունը չի հիշվում, նա պետք է հասներ երեք օրում[39]: Սումբիի տեղադրությունը[40], ինչպես նաև այլ նկատառումներ միանգամայն հնարավոր են դարձնում նման մոտեցումը: Ըստ այդմ, հիշված զեկուցագրերը կարելի է թվագրել Սարգոնի «VIII տարվա արշավանքի» սկզբնական շրջանով (մ. թ. ա. 714 թ. հունիս):

Հետևաբար, կարող ենք խոսել արշավանքին նվազագույնը երեք նահանգային գնդերի մասնակցության մասին: Մեպագիր աղբյուրները թվական տվյալներ են պահպանել դրանցից մեկի մասին: Ըստ աղբյուրի, Զամուա նահանգի համահավաք զորախումբն ունեցել է առնվազն 1.500 զինվոր[41]: Զորախումբն ընդգրկում էր հեծյալ ջոկատ և մարտակառքերի խումբ՝ նվազագույնը 10 միավոր[42]: Այս տվյալները, սակայն, չեն կարող հիմք ծառայել եզրահանգումների համար, քանի որ նույն աղբյուրում նշվում է, որ դա Զամուայի նահանգապետի հրամանատարության տակ գտնվող ուժերի վերջնական թիվը չէ:

Այլ աղբյուրներից հայտնի է, որ ասորեստանյան նահանգի վերածված Կումմուխում Սարգոնը նահանգապետին է հանձնել բավական նշանակալի ուժեր՝ 150 մարտակառք, 1.500 հեծյալ, 20.000 նետաձիգ և 1.000 պարսատիկավոր ու նիզակակիր զինվոր[43]: Հիմք ընդունելով այս տվյալները, Վ. Մանիքիուսը ենթադրել է նման թվաքանակներ ասորեստանյան բոլոր նահանգների համար[44]: Նահանգային զորքերի քանակը, անշուշտ, կախված էր տվյալ նահանգի ունեցած ռազմավարական նշանակությունից: Այս ստումով Զամուան, որի զորքերի մասնակցությունը արշավանքին կարելի է համարել կասկածից դուրս, գտնվում էր ռազմական տեսանկյունից մեծ կարևորություն ունեցող նահանգների շարքում[45]:

Այս ամենով հանդերձ հնարավոր չէ հստակեցնել ասորեստանյան զորաբանակի թվակազմը: Պարզապես պետք է փաստենք, որ գործ ունենք բավական նշանակալի խմբավորման հետ, եթե վերոհիշյալ նահանգների զորախմբերին հավելենք «արքայական գունդը», Սարգոնի թիկնապահ զորախումբը, Սին–ախ–ուծուրի pirru–միավորում (ներ) ը, Շարրու–էմուրանիի գունդը, ինչպես նաև ասորեստանցիներին դաշնակից մանայական և ալլաբրիական զորքերը:

Ի դեպ, ասորեստանյան բանակի առավելագույն թվաքանակը, որը հայտնի է տարբեր արշավանքների նկարագրություններ պահպանած սեպագիր աղբյուրներից, հասնում է 120.000 զինվորի՝ ներառյալ դաշնակիցներին[46]:

Ուրարտական բանակը.

Ճակատամարտի նկարագրությունը պահպանած «Լուվրի աղյուսակը» ընդհանուր բնույթի արտահայտություններից զատ չի պարունակում կոնկրետ տվյալներ ուրարտացիների և նրանց դաշնակից բանակների թվաքանակի մասին: Մեպագիր աղբյուրներում պահպանված սուղ նյութերը, այնուամենայնիվ, թույլատրում են անել խիստ ընդհանուր դիտարկումներ:

Ժամանակաշրջանի ասորեստանյան հետախուզական աղբյուրներից հայտնի է, որ կիմմերների դեմ ձեռնարկված արշավանքին ուրարտական տերությունը կենտրոնացրել էր զորքերի մեծ քանակ՝ ուրարտական բանակի գլխավոր զորահրամանատար (^{LÚ}turtānu) Կակկադանուի, ավելի քան 13 մարզպետների զորամասերն[47] ու, հաստատապես, արքայական գունդը: Հայտնի է նման մեկ գնդի թվակազմը՝ մոտ 3000 զինվոր[48]: Հետևաբար, կարելի է նշել, որ կիմմերների դեմ գործող ուրարտական բանակի զինվորների թիվն անցել է մի քանի տասնյակ հազարից[49]: Այս կարգի թվաքանակները կարող են ընդունելի լինել նաև Ուառուշի ճակատամարտի պարագայում. ասորեստանյան տվյալների համաձայն, արքայական գնդից բացի բանակի կազմ են ներգրավվել «ուրարտական մեծամեծների» ՝ թերևս մարզպետների զորամասերը, ինչպես նաև դաշնակից «հարևան արքաների» ուժերը:

Թեև ասորեստանյան աղբյուրները չեն պահպանել Ուառուշի ճակատամարտին մասնակից մարզպետների կամ մարզային զորամասերի թիվը (ԼԱ–ը հիշատակում է միայն ուրարտական գերեվարված մարզպետների[50]), այնուամենայնիվ, կարելի է ենթադրել նրանց գլխավորած առնվազն յոթ–ութ գնդերի մասնակցություն: Որպես հիմնավորում հարկ է նշել, որ ուրարտա–ասորեստանյան լարված, սակայն ոչ պատերազմական իրավիճակում ուրարտական պետությունը Ուայախ մարզում կենտրոնացրել էր հինգ[51], իսկ Պուլուա և Դասիբանի քաղաքներում (Տիգրիսի վերին հոսանքի շրջան) ՝ վեց մարզպետների գնդեր[52]:

Ինչ վերաբերում է ուրարտական բանակի զորատեսակներին, ապա դրանք էապես չեն տարբերվել ժամանակաշրջանի այլ բանակների համանման ուժերից: Բանակն ունեցել է մարտակստքեր[53], հեծելազոր[54], որն իր թվաքանակով, կարծում ենք, գրեթե չի զիջել հետևազորին, հետևակ՝ իր զորատեսակներով (տվյալ պարագայում «Լուվրի աղյուսակը».հիշատակում է նետաձիգների[55], պարսատիկավորների[56], տեգավորների[57] և զրահավորված ռազմիկների /qurādišu ša taḫlupti/) [58], սակրավորներից կազմված զորամասեր, ինչպես նաև օժանդակ ուժեր և գումակ: Նույն աղբյուրում ռազմիկ (^{LÚ}mundaḫsu) բսաը, որը հանդես է գալիս երկու անգամ, արտահայտել է ուրարտական բանակի նետաձիգ և տեգավոր զինվորների. ^{LÚ}mun–daḫ–ši–šu tu–kul–ti um–ma–ni–šu na–nš

$^{gi^3}$BAN as–ma–re–e… «նրա ռազմիկները՝ նրա բանակի հույսը, որոնք կրում էին սպեղնիր և աեգեր…» [59]: Ուառուշում ուրարտացիների գլխավոր դաշնակից զիկերտական բանակն ունեցել է հեծելազոր, որն աղբյուրում, ինչպես ուրարտական հեծելազորը, արտահայտվել է «ձիեր» տերմինով[60], և հետիոտն «ռազմի զինվորներ» (ṣāb taḫāzi) [61]:

Բանակի զինվածությանը վերաբերող մեր հիմնական աղբյուրը հնագիտական բավական հարուստ նյութերն են[62]: Որոշակի պատկերացում են տալիս նաև սեպագիր աղբյուրների և մասնավորապես՝ «Լուվրի աղյուսակի» այն տվյալները, որոնք վերաբերում են Մուծածիրից տարված ռազմավարին:

Դաշնակիցների բանակները.

Ուառուշի ճակատամարտում թե մեկ, թե մյուս կողմի ճամբարներում են գտնվել դաշնակից զորքեր: Ընդ որում, եթե աղբյուրն ուղղակի նշում է ուրարտացիների դաշնակիցների՝ «հարևան արքաների» մասին, ապա ասորեստանյան ճամբարում դաշնակից զորքերի առկայությունը սոսկ ենթադրվում է:

Ուրարտացիների հիմնական դաշնակիցը, ինչպես նշվեց, զիկերտական բանակն էր, արքայի՝ Մետատտիի անմիջական հրամանատարությամբ: Դաշնակիցների շարքում են գտնվել Խուրուշկիայի զորքերը, որի արքա Յանզուն այս շրջանում հակվել էր դեպի Ուրարտուն: Խուրուշկիական ուժերի առկայությունն է հավաստում ասորեստանյան զեկուցագրերից մեկը: Դրա համաձայն, Ուառուշին նախորդող շրջանում Ռուսա I–ի զորախումբը խուրուշկիացիների ուղեկցությամբ շարժվել է ասորեստանյան զորքերին ընդառաջ, մինչ վերջիններս զբաղված էին զիկերտացիների դեմ պատերազմելով[63]: Ընդ որում, հիմքեր կան պնդելու, որ Ուառուշում խուրուշկիացիները դիմել են դավաճանության՝ անցնելով հակառակորդի կողմը կամ բռնելով չեզոք դիրք (տես ստորև):

Ինչ վերաբերում է «հարևան արքաներին», ապա աղբյուրները չեն պարունակում որևէ տվյալ, որը հնարավոր կդարձներ հստակեցնելու նրանց անունները: Կարելի է սոսկ ենթադրել դաշնակիցների շարքում անդիացիների առկայության մասին: Մերձուրմյան նշանակալի պետական կազմավորումներից Անդիան, ըստ համաժամանակյա աղբյուրների, այս շրջանում դաշնակցել է Ուրարտուին, մեծավ մասամբ հանդես գալով հակաասորեստանյան կամ հակամանայական ճամբարում՝ Զիկերտուի հետ միասին:

Ասորեստանյան տերության հիմնական դաշնակիցն արևելքում, նաև «VIII տարվա արշավանքի» ժամանակ, Մանայի թագավորությունն էր: «Լուվրի աղյուսակի» վկայությամբ, արշավանքի սկզբնահատվածում տեղի են ունեցել երկու երկրների տիրակալներ Սարգոնի և Ուլլուսունայի հանդիպումները նախ՝ Սինիխինի և ապա՝ Սիրդակկա մանայական ամ-

ռոցներում: Հեռք բերված պայմանավորվածությունների մեջ էին ասորեստանյան բանակի մատակարարումը, որն իրականացնելու էր մանայական պետությունը, ինչպես նաև օժանդակ ուժերի տրամադրումը: Մանայական զորքերին առաջնորդելու էր Ուլլուսանուի ավազ որդին, որին աղբյուրը չի հիշում հանվանե՞: Նշվածով հանդերձ մանայական պետության խաղացած դերակատարման մասին ասորեստանյան սույն աղբյուրից հնարավոր չէ կազմել լիակատար պատկերացում: Փաստ է, որ մանացիների երկիրը «չար թշնամիներից» (Ուբարտու, Զիկերաու, Անդիա ևն) պաշտպանելու դրույթներով իրականացվող արշավանքին մանայական պետությունը չէր կարող չունենալ էական մասնակցություն:

Եթե ճիշտ է SAA, V, No. 199–ի համար մեր կողմից առաջարկվող թվագրումը Սարգոնի «VIII տարվա արշավանքի» սկզբնական շրջանով, ապա կարող ենք նշել, որ ասորեստանյան բանակին ուղեկցել են ոչ միայն մանայական, այլև նրան սահմանակից պետական կազմավորումներից Ալլաբրիայի ուժերը: Վերջիններիս առաջնորդելու էր ալլաբրիական արքայազնը[65]:

Ինչ վերաբերում է կիմմերների մասնակցությանը Ուառուշի ճակատամարտին և ընդհանրապես՝ «VIII տարվա արշավանքին»՝ որպես դաշնակից կամ վարձկան ուժեր, ապա նման հնարավորությունը չի կարելի բացառել, թեև մեր տրամադրության տակ ուղղակի փաստեր չկան: Պարզապես, խիստ վիճելի է որոշ մասնագետների մոտեցումն այն մասին, որ գրեթե նույնացվում են կիմմերների դեմ ուրարտացիների մղած ճակատամարտը Ուառուշի հետ[66]: Այս հարցին անդրադառնալը կնշանակեր անդրադարձ՝ մ. թ. ա. 715–714 թթ. ուրարտա–ասորեսաանյան հակամարտությանն ընդհանրապես, ինչն այլ ուսումնասիրության թեմա է:

Ուառուշի ճակատամարտն ըստ «Լուվրի աղյուսակի».

«Լուվրի աղյուսակը» հեղինակած Նաբու–շալլիմ–շումնուն հիմնական տեղը հատկացրել է Սարգոնին և ասորեստանյան հզորությունը փառաբանող տարբեր պատկերավոր արտահայտությունների, այնինչ ճակատամարտի բուն նկարագրությունը տալիս է հակիրճ՝ որպես Սարգոնի գործած սխրագործությունների ենթատեքստ: Ուառուշին վերաբերող 70 տողերից (ԼԱ, տող 91–161) ճակատամարտի դրվագներն են արտացոլում սոսկ 21–ը: Դրանք են.

I. ԼԱ, տող 110–111.

«...Նրա սիրտը ցանկացավ ինձ հետ բաց ճակատամարտ տալ...: Այդ լեռան կիրճում շարեց նա զորքերը: Զորքերի մոտեցման և մարտակարգ ընդունելու մասին իմ սուրհանդակը ինձ հայտնեց»:

II. ԼԱ, տող 127–146.

Ա–ա «...Աշշուր աստծու տանջված զինվորները, որոնք երկար ճանապարհ էին անցել, հոգնած էին և ուժասպառ, ... ես թույլ չտվեցի նրանց հանգստանալ, ... իմ գունդը չհավաքեցի..., իմ անձնական մարտակառքով և ձիերով, Սին–ախ–ուծուրի զորախմբով, ինչպես զայրացած տեգ, նրա սրտին հարվածեցի և նրան պարտության մատնեցի, կանխեցի նրա գրոհը...»:

Ա–բ «...մեծ կոտորած կազմակերպեցի, ... նրա ռազմիկներին, ... նրա նետաձիգներին ..... նրա ոտքի առաջ գառների նման մորթեցի, ... արքայական ընտանիքի 260 անդամների ..... իմ ձեռքով բռնեցի...»:

Ա–գ «...նրա ճակատը կազմալուծեցի, ... նրան ճամբարի բազմության մեջ փակեցի ... իր կյանքը փրկելու համար (նա) իր մարտակառքը լքեց և մատակ ձի նստած իր զորքի առջևից ճողոպրեց»:

Ա–դ «Զիկերտացի Մեհատաիին՝ հարևան արքաներով – ես նրանց զորքը խոնարհեցրի, նրանց գունդը ցաքուցրիվ արի, ... Ուրարտու երկրի զորքը և նրա դաշնակիցներին պարտության մատնեցի ..... վեց «բերու» տարածություն՝ Ուառուշ·լեռից մինչև Զիմուր լեռը ... հետապնդեցի նրանց...: Մյուսներին, որոնք իրենց կյանքը փրկելու համար փախուստի դիմեցին, արձակեցի (նրանց) Աշշուրի՝ տիրոջս հաղթանակը փառաբանելու համար»:

Ճակատամարտի իրողությունը պահպանած սարգոնյան մյուս աղբյուրները՝ արքայի տարեգրությունը, «Հանդիսավոր արձանագրությունն» ու Կիպրոսում գտնված կոթուղ–արձանագրությունը չեն պարունակում լրացուցիչ տվյալներ:

Ճակատամարտի ընթացքը.

Հետազոտողներ Հ. Սագսի, այնուհետ Ջ. Սմիթի դիտարկումները հանգում են հետևյալին. Սարգոնի հրամանատարած հեծյալ ուժերի գրոհ մեկ կամ երկու շարքով մարտակարգ ընդունած ուրարտացիների ճակատային գծի վրա (հետևակային կամ խառը զորամիավորումներ), ճակատային գծի ճեղքում, հարված Ռուսայի առաջնորդած հեծելազորին, հեծելազորի շրջապատում, Ռուսայի և ուրարտական զորքերի փախուստ, կոտորած, հարված դաշնակից զորքերին և նրանց փախուստ ու կոտորած (զուգահեռ է անցկացվում Մարաթոնի ճակատամարտի հետ) [67]:

Կ. Հովհաննիսյանի վերակազմությունը նշվածից տարբերվում է նրանով, որ ենթադրվում է ուրարտական գլխավոր ուժերի շրջապատում՝ ներառյալ հետևակն ու հեծելազորը (զուգահեռ է անցկացվում Կաննեի ճակատամարտի հետ) [68]:

Դժվար չէ նկատել, որ բոլոր եզրահանգումների հիմքում ընկած է հանդիպակաց մարտը՝ ուրարտացիների ճակատային գծի ճեղքման և

բանակի հեծելազորին կամ «սպայակույտին» հարվածելու հիմնական գաղափարով[69]:

Ճակատամարտի նկարագրության վերլուծությունը, սակայն, հնարավորություն է ընձեռում առաջարկելու դրա ընթացքի այլ պատկեր:

Հետախույզներից տեղեկանալով Ուառուշի կիրճերում ուրարտական և դաշնակից զորքերի ամրանալու և մարտակարգ ընդունելու մասին, ասորեստանյան հրամանատարությունը, կարծում ենք, վճռել է խուսափել հանդիպակաց մարտից: Դրա համար կային մի շարք պատճառներ: Նախ, աննպաստ էր տեղանքը. ուրարտական բանակը զբաղեցրել էր բարձունքները, ուր ձգվող նեղ կիրճը մանելու դեպքում զորքերը, չհասնելով մերձամարտի, կհայտնվեին անվտանգ տարածության վրա գտնվող ուրարտացիների հարվածների տակ: Բացի այդ, ասորեստանյան բանակը կզրկվեր ազատ տեղաշարժվելու, զինվորական ուժն առավելագույնս օգտագործելու հնարավորությունից[70]: Ուստի, ասորեստանյան հրամանատարությունը, ըստ երևույթին, ընտրել է այլ մարտավարություն՝ փորձել հակառակորդի դեմ օգտագործել նրա իսկ պարտադրած տեղանքը:

Բարձունքները զբաղեցրած ուրարտական բանակը, թիկունքում ունենալով անմատչելի լեռներ, թվում էր անխոցելի: Ուրարտական հրամանատարությանը խիստ հարմար թվացող տեղանքը, մյուս կողմից, ուներ էական բաց: Ուրարտացիներին այն չէր մղում մտածելու թիկունքի ապահովության մասին. ըստ այդմ, հիմնական ուժերը կենտրոնացրել էին առաջին գծում՝ մեծ խորությամբ, սակայն սահմանափակ, տեղանքի ուրվագծած ճակատով: Իսկ դա նշանակում է, որ ուրարտացիները կորցնում էին ևս մեկ առավելություն՝ ենթադրվող թվական գերազանցությունը: Ընդ որում, սահմանափակ տարածության պատճառով, ուրարտացիներին դաշնակից ուժերն անգամ չէին ընդգրկվել առաջին գծում: Նրանք բանակել էին առանձին, ճակատային գծից հեռու: Բանակը զրկվել էր նաև նպատակային, ազատ տեղաշարժերի հնարավորությունից: Փաստորեն, ուրարտական հրամանատարությունը, վարձելով կաշկանդել ասորեսաանյան ուժերին, ինքն էր հայտնվել նման վիճակում[71]:

Ասորեստանյան հրամանատարությունը, որին, թվում է, ծանոթ էր ուրարտական ճամբարում տիրող անցուդարձը, ընտրել է հակառակորդին անակնկալ հարված հասցնելու ճանապարհը՝ ուրարտացիների թիկունքում գտնվող այդ նույն անմատչելի լեռներից: Այս նպատակով, կարծում ենք, ասորեստանցիները որոշել են դիմել շրջանցիկ զորաշարժի՝ նպատակ ունենալով դուրս գալ հակառակորդի թիկունքը՝ ուրարտական ճամբարին հնարավորինս մոտ: Այս նպատակով բանակի կազմից առանձնացվեցին ընտրյալ ուժեր՝ «արքայական գունդը» (kiṣir sarrūti), որին գլխավորում էր Սարգոնն անձամբ, նրա թիկնապահ զորախումբն

ու արքայի խորթ եղբոր՝ Սին–ախ–ուծուրի pirru–միավորումը՝ 2–ից 3.000 զինվորներով:

Շրջանցիկ զորաշարժն իրականացվել է այն ժամանակ, երբ ասորեստանյան զորաբանակի հիմնական ուժերը գտնվել են երթի մեջ, այսինքն՝ մինչ հակառակորդ բանակների մերձեցումը:

Լեռնային դժվարամատչ տեղանքով ընթացած զորաշարժը ասորեստանցիներից պահանջել է մեծ ճիգեր: Դրա պատկերավոր նկարագրությունը տալիս է «Լուվրի աղյուսակը».

«(ԼԱ, հատված II–ա) Աշշուր աստծու տանջված զինվորները, որոնք երկար ճանապարհ էին կտրել, հոգնած էին և ուժասպառ, անցել էին անհամար բարձր լեռներ, որոնց վերելքն ու վայրէջքը դժվարին էր՝ ես թույլ չավի նրանց հանգստանալ, ծարավս հագեցնելու համար ջուր չըմպեցի, հանգստավայր չստեղծեցի, ճամբար չսարքեցի...»:

Ուրարտացիներն ու նրանց դաշնակիցները, անտեղյակ լինելով Սարգոնի հեռանալուն, այս շրջանում չեն սպասել հարձակման: Մինչ ասորեստանյան հիմնական ուժերը կմոտենային բարձունքները զբաղեցրած հակառակորդին, Սարգոնի առաջնորդած զորախումբն ուրարտացիների թիկունքում զբաղեցրել է հարմար դիրքեր՝ բանակի կենարոնակայանին հնարավորինս մոտ: Այստեղ էլ արքան տեղեկացվել է հիմնական ուժերի մոտենալու և ռազմակարգ ընդունելու մասին (ԼԱ, հատված I):

Սարգոնը որպես թիրախ ընտրել էր ուրարտական բանակի հրամանատարությանը՝ արքային՝ իր մերձավորներով, և արքայական գունդը «...ինչպես զայրացած տեգ նրա սրտին հարվածեցի...» – հայտնում է «Լուվրի աղյուսակը»:

Հարձակումը ճամբարի վրա, ամենայն հավանականությամբ, ձեռնարկվել է ճակատային ընդհարումը սկսվելուց առաջ (հմմտ. «կանխեցի նրա գրոհը» արտահայտությունը), հավանաբար՝ վաղ արևածագին: Ասորեստանյան աղբյուրներից հայտնի են նման գրոհների դրվագներ: Մարաը սկսել են Սին–ախ–ուծուրի նետաձիգները՝ թիրախ ընտրելով Ռուսայի հեծյալներին: Անակնկալ նետաձգությունը ուրարտացիներին պատճառել է ոչ միայն կորուստներ, այլև խառնաշփոթ ստեղծել նրանց ճամբարում: Իրարանցումից օգտվելով ճամբարն է գրոհել Սարգոնի հեծելազորը, իսկ նետաձգությունը շարունակվել է մինչև մերձամարաբ: Նետաձիգների և հեծելազորի փոխգործակցությամբ ձեռնարկված գրոհի մասին կարելի է դատել այն փաստից, ըստ որի ասորեստանցիները գործել են նետերով և տեգերով (ina ussi mulmulli) ": Առաջին զինատեսակը մերձամարաի համար հարմար չէ, իսկ տեգը, ինչպես հայտնի է, ասորեստանյան հեծյալի հիմնական զենքն էր:

Ասորեստանցիները լիովին օգտագործել են անսպասելության գործոնը՝ անակնկալ հարձակման ընձեռած առավելությամբ պասսիվ

գործողությունների դատապարտված ուրարտացիներին սեղմելով իրենց իսկ ճամբարին: Հարձակման թիրախ Ռուսան, արքունի զինվորներով, հայտնվել է շրջափակման մեջ: Ընդ որում, դրա հետևանքով ուրարտական բանակի հրամանատարական կազմը մեկուսացվել է զորքերի հիմնական զանգվածից, ինչը խիստ բացասաբար է անդրադարձել անհաջող սկսված մարտի հետագա ընթացքի վրա: Փաստորեն, ասորեստանցիների նպատակային գործողությունների արդյունքում, կարվել է կապը հրամանատարության և զորքերի միջև, բանակի հիմնական ուժերը մատնվել են անգործության: Շարքերում տիրել է խսանաշվոթը. ըստ էության մեծ էր նաև հարձակման գործած հոգեբանական ազդեցությունը ուրարտական զինվորների վրա:

Սինչ մարտերն ընթանում էին ուրարտական ճամբարի մատույցներում, ասորեստանյան հիմնական ուժերը սկսել են գրոհել հակառակորդի ճակատային գիծը: Զարգացումների նման ընթացքից անակնկալ եկած ուրարտական հիմնական ուժերը, զրկված լինելով գլխավոր հրամանատարական կազմից, անգամ չեն վարձել դիմակայել ասորեստանցիներին՝ դիմելով նախ անկանոն նահանջի դեպի ճամբար, իսկ այնուհետ՝ համատարած փախուստի: ԼԱ-ի տվյալները չեն վկայում հանդիպակաց մարտի վաքր-ինչ երկարատև տարբերակի օգտին՝ փաստը՝ հաղորդելով իմիջիայլոց, մեկ արտահայտությամբ՝ «նրա ճակատը կազմալուծեցի»:

Ուրարտացիների հետապնդումը վերածվել է անխնա կոտորածի՝ պաշարված ճամբարում դեռևս դիմադրող արքունի զինվորների աչքի առաջ: Այս պայմաններում ուրարտական զինվորներին այլ ելք չեր մնում արքայի կյանքը փրկելուց զատ: Դա հաջողվել է մեծ դժվարությամբ, ծանր կորուստների գնով: Արքունի արձանագրություններին բնորոշ ոճով գրված ասորեստանյան տեքստը մանրամասնում է.

«...Մեծ կոտորած կազմակերպեցի, ... նրա ռազմիկներին, նրա նետաձիգներին, տեգակիրներին՝ նրա ոտքի սաաջ՝ գսաան նման մորթեցի, ... արքայական ընտանիքի 260 անդամներին ..... իմ ձեռքով բռնեցի: Իր կյանքը փրկելու համար (նա) իր մարտակառքը լքեց, նստեց մատակ ձի և իր զորքի ստջևից փախավ» (հատված II-բ / II-գ):

Ուրարտական բանակի կազմալուծմանն ու Ռուսայի փախուստին հաջորդեց արքունի գնդի և կենտրոնակայանի ջախջախումը. ուրարտական դիրքեր ներխուժած ասորեստանցիների ձեռքն ընկան բանակի հրամանատարական կազմը, արքայական ընտանիքի մեծ թվով անդամներ և ողջ մնացած արքունի հեծյալները: Այս նույն շրջանում, կարծում ենք, դավաճանության են դիմել ուրարտացիներին դաշնակից խուրուշկիական զորքերը՝ լքելով դաշնակից ուժերի ճամբարը: Դա կարող էր լինել և որոշակի պայմանավորվածությունների արդյունք՝ վաղո-

ռոք ձեռք բերված ասորեստանցիների հետ, և իրադարձությունների նկարագրված զարգացումների: Հատկանշական է, որ, «Լուվրի աղյուսակի» վկայությամբ, Սարգոնն Ուառուշում ազատ է արձակել և իր մոտ թողել թշնամու ինչ–որ մարդկանց. «մնացած մարդկանց, որոնք իրենց կյանքը փրկելու համար փախան, արձակեցի (նրանց) Աշշուրի՝ տիրոջս հաղթանակը փառաբանելու համար»: Ամենայն հավանականությամբ, արքունի գրիչն այստեղ նկատի է ստել խուրուշկիացիներին: Վերջիններս (տեքստում՝ UN.MEŠ KUR Ni'iri Նա'իրի երկրի մարդիկ) արդեն հիշատակվում են «Լուվրի աղյուսակի» 259–րդ տողում, մանացիների հետ միասին, մի ենթատեքստում, որը նկարագրում է ուրարտական ամրոցների ավեր և թալան[73]:

Ուրարտական ճամբարի ջախջախմանն ու բանակի քայքայմանն ականատես դաշնակիցների զորքերը, որոնք բանակել էին առանձին, խուրուշկիացիների հեռանալուց հետո անկարող գտնվեցին կասեցնելու ասորեստանցիների նոր գրոհը: Նրանց հիմնական հարվածն ուղղված էր առավել մարտունակ ուժի՝ զիկերտական բանակի դեմ: Ճակատամարտի այս հատվածի նկարագրությունը խիստ լակոնիկ է. նշվում է միայն Մեսատատի զիկերտացու և «հարևան արքաների» զորքը խոնարհեցնելու, նրանց գունդը ցաքուցրիվ անելու մասին (հատված II–դ): Ըստ էության, այստեղ ևս բացակայել է կազմակերպված դիմադրությունը: Տեքստը շարունակում է.

«...Ուրարտու երկրի՝ չար թշնամու զորքը և նրա դաշնակիցներին պարտություն հասցրի, Ուառուշ լեռան վրա նրանց փախուստի մատնեցի ..... նրանք, ինչպես մրջյունները վտանգին, բռնեցին դժվարին ճանապարհները...» (հատված II–դ):

Ասորեստանյան հեծելազորը, ըստ նույն աղբյուրի, «արևածագից մինչև մայրամուտ» հետապնդել է նրանց՝ Ուառուշից մինչև Զիմուր լեռը՝ 6 "beru" ճանապարհ (նվազագույն հաշվումներով՝ մոտ 35 կմ) [74]:

Այսպիսով, կարելի է սահմանափակվել փաստելով, որ հանդիպակաց ճակատամարտ, որպես այդպիսին և հակառակ պնդումների՝ չի եղել. դրա վախաբեն տեղի է ունեցել ուրարտական բանակի թիկունք ներթափանցած ասորեստանցիների անսպասելի հարձակում բանակի կենտրոնակայանի վրա, զորքերի կառավարման կազմալուծում, ուրարտական դիրքերը պատած համատարած խառնաշփոթ, դաշնակից ուժերի մի մասի դավաճանություն, բանակի հիմնական զանգվածի կողմից լուրջ դիմադրության բացակայություն՝ դրան հետևած տրամաբանական շարունակությամբ՝ ուրարտական և դաշնակից ուժերի փախուստ ու կոտորած: Այս առումով Ուառուշը ընդհանուր գծերով հիշեցնում է հայկական և հռոմեական զորքերի միջև մ. թ. ա. 69 թ. հոկտեմբերի 6–ին տեղի ունեցած Տիգրանակերտի ճակատամարտը[75]:

Ուրարտացիները կրեցին մեծ կորուստներ: Բավական է նշել, որ Ռուսայի տոհմակիցների թիվը, որոնք գերվել էին ասորեստանցիների կողմից, հասնում էր 260–ի[76]: Գերիների մեջ էին, բացի այդ, արքունականներ՝ ներքինիներ (^{LÚ}šut–SAG^{MEŠ}), խորհրդականներ (^{LÚ}maliki), մարզպետներ (^{LÚ}EN.NAM^{MEŠ}) և հեծյալներ (^{LÚ}PIT.ḪAL.LU^{MEŠ}): Նրանց զգալի թիվը պայմանավորված էր այն հանգամանքով, որ վերջիններս, գտնվելով արքայի կողքին՝ ճամբարում, հենց սկզբից հայտնվել են մարտերի կենտրոնում՝ իրենց վրա ընդունելով հիմնական հարվածը:

Ուաուշից հետո ուրարտա–ասորեստանյան նոր մարտեր, թվում է, տեղի չունեցան: Աղբյուրի վկայությամբ, ուրարտական անմատչելի ամրոցների կայազորներն անգամ լքում էին դիրքերը՝ խուսափելով ասորեստանցիների հետ բախումներից: Փաստը պատճառաբանվում է ուրարտական բանակը պահպանելու Ռուսայի ցանկությամբ. քանի դեռ կար բանակը, կլիներ և հաղթանակի հույսը...

Ուսուշի ճակատամարտին հաջորդեց ասորեստանցիների հաղթարշավը ուրարտական յոթ մարզերով՝ դրա վերջում նվաճելով և սվերելով պետական նշանակալի կազմավորում, ուրարտացիների հոգևոր կենտրոն Սուծածիրը: Արշավանքի արդյունքում ուրարտական տերությունը կորցրեց մերձուրմյան մի շարք տիրույթներ:

YERVAND GREKYAN

THE BATTLE OF UAUSH
(A historic–comparative analysis)

One of the most famous events from the history of the Ancient Near East was the "Eight Year's Campaign" of Sargon II of Assyria to Urartu (c. 714 B. C.). It was the culmination of confrontation between these powerful empires. The key battle took place on Mt. Uaush (modern Sahand). The paper deals with the Battle based on analysis of the text "Letter to Aššur" – an Assyrian cuneiform source and concludes a new possible reconstruction of it.

The author puts down a hypothesis, according to which no oncoming battle took place on Mt. Uaush as was suggested by the scholars to this date. He thinks that Sargon's victory was achieved by an unexpected attack of Assyrian elite group of troops led personally by the king on headquarters of Rusa – king of Urartu and his cavalry units, which led up to losing of connections between the headquarters and the army units. It also made psychological effect: the soldiers were demoralized, the troops have come asunder, they didn't try to defend and escaped. The Urartian army was fated to suffer a terrible defeat.

The author compares Uaush with the Battle of Tigranakert between the Roman and Armenian armies in October 6, 69 B. C.

The paper also examines the possible size of both armies, their ethnic and military structure etc.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Այս արշավանքը և դրա հետ կապված մի շարք հարցեր մասնագետների ուշադրությանն են արժանացել սկսած անցյալ դարասկզբից: Չնայած հետազոտողի սեղանին են դրվել տասնյակ աշխատանքներ, այնուամենայնիվ, խնդիրը չի կարելի համարել լիովին լուսաբանված: Նրան վերաբերող գրականության հղումները հնարավոր է գտնել Ն. Հարությունյանի "Биайнили" (Ереван, 1970, с. 292–311), Φ. Ջիմանսկու "Ancient Ararat: A Handbook of Urartian Studies" գրքերում (pp. 45–51, Delmar, New York, 1998):
2. F. Thureau–Dangin, Une relation de la huitieme campagne de Sargon (714 av. J. –C.), Textes cuneiformes, Tome III, Musee du Louvre, Paris, 1912 (TCL III), pp. 2–67 (XXX Pl) ; D. D. Luckenbill, Ancient Records of Assyria and Babylonia (ARAB), vol. II, 1927, No. 139–178; И. М. Дьяконов, Ассиро–вавилонские источники по истории Урарту, ВДИ, 1951, № 2, 3, 4 (АВИИУ), 49; W. Mayer, Sargons Feldzug gegen Urartu–714 v. Chr.: Text und Übersetzung, MDOG, Heft 115, 1983, S. 65–132: Մասնագիտական գրականության մեջ աղբյուրը հայտնի է «Լուվրի աղյուսակ» անվամբ (այսուհետև՝ ԼԱ):
3. Մասնագիտական գրականության մեջ առկա են տարակարծություններ՝ Ռաուշ լեռան տեղորոշման խնդրում: Չխորանալով մանրամասների մեջ հարկ է նշել, որ շրջանառվող կարծիքներից առավել ընդունելին Ռաուշ – ներկայիս Սահանդ համադրությունն է (F. Thureau–Dangin, TCL, III, p. VII): Ուաշշին «Լուվրի աղյուսակի» տված բնութագրումները առավել քան բնորոշ են Սահանդ լեռանը (3710մ):
4. H. W. F. Saggs, Assyrian Warfare in the Sargonid Period, "Iraq", vol. XXV, pt. 2, 1963, pp. 145–154, sp. 151–154; К. Л. Оганесян, Ассиро–урартское сражение на горе Уауш (714 г. до н. э.), ИФЖ, 1966, № 3, с. 107–118; он же: Ассирийский поход в Урарту в 714 г. до н. э., ВОН, 1985, № 11, с. 69–80, сп. 71–74; J. B. Smith, A Tactical Re–Interpretation of the Battle of Uaush: Assyria and Urartu at War 714 BC, in "Anatolian Iron Ages 3", eds. A. Çilingiroğlu, D. H. French, British Institute of Archaeology Monograph No. 16, 1994, pp. 229–239.
5. W. Manitius, Das stehende Heer der Assyrerkönige und seine Organisation, ZA, Bd. XXIV, 1910, S. 97–149, 185–224; F. Malbran–Labat, L'armée et l'organisation militaire de l'Assyrie, Geneva–Paris, 1982; E. N. Cooper, The Organization of the Neo–Assyrian Army: The Presence of Aramean Soldiers in the Assyrian Forces, Cambridge, 1988; D. Noble, Assyrian Chariotry and Cavalry, SAAB, vol. 4, 1990, pp. 61–68; W. Mayer, Politik und Kriegskunst der Assyrer, Abhandlungen zur Literatur Alt–Syrien–Palästinas und Mesopotamiens, 9, Münster, 1995 և այլուր:

6. ԼԱ, տող 12, 22, 25, 132, 313, 320, 331, 426:
7. ԼԱ, տող 25, 320, 426: Աղբյուրում՝ «հեծյալ, հեծելազոր» իմաստը արտահայտվել է նաև ANŠE.KUR.RA (MEŠ)՝ «ձի(եր)» բառով (ԼԱ 12, 22, 132, 313):
8. ԼԱ, տող 26, 258 426: Տերմինի՝ նման իմաստով ընկալումը տես J. N. Postgate, The Assyrian Army in Zamua, "Iraq", vol. LXII, 2000, pp. 89–108, sp. 104–105: Հմմտ. И. М. Дьяконов, АВИИУ, 49 (233) и прим. 62; The Assyrian Dictionary (CAD), K, Chicago, 1971, "Kallābu", pp. 77–78; F. Malbran–Labat, op. cit., s. 82–83; S. Dalley, Foreign Chariotry and Cavalry in the Armies of Tiglath-Pileser III and Sargon II, "Iraq", vol. XLVII, 1985, p. 37 և այլուր:
9. ԼԱ, տող 22, 325, 330:
10. ԼԱ, տող 258, 320:
11. ԼԱ, տող 258, 320:
12. ԼԱ, տող 320:
13. ԼԱ, տող 26, 258:
14. ԼԱ, տող 24:
15. ԼԱ, տող 25, 85 և այլուր:
16. ԼԱ, տող 123, 130, 289, 302, 321 և այլուր:
17. E. Botta et F. Flandin, Monuments de Ninive, Paris, 1849–1850, II, pl. 142–143. Ասորեստանյան բանակին վերաբերող դիտարկումներն ըստ բարձրաքանդակների տես J. E. Reade, The Neo–Assyrian Court and Army: Evidence from the Sculptures, "Iraq", vol. XXXIV, pt. 2, 1972, pp. 87–112, sp. 101–107, pls XXXIII–XL.
18. Ասորեստանյան բանակի հրամկազմի մասին առավել մանրամասն տես F. Malbran–Labat, op. cit., s. 113–163.
19. F. M. Fales, J. N. Postgate, Imperial Administrative Records, Part II: Provincial and Military Administration, SAA, XI, Helsinki, 1995, No. 126.
20. Արձանագրության հրատարակիչները հակված են kiṣru անվան տակ տեսնել կանոնավորապես 100 զինվորներից բաղկացած զորախմբեր (cohorts)՝ դրանից բխող հետևություններով: Տես F. M. Fales, J. N. Postgate, SAA, XI, p. XXVII.
21. L. Waterman, Royal Correspondence of the Assyrian Empire (RCAE), vols. 1–4, Ann Arbor, 1930–1936, No. 304; S. Parpola, The Correspondence of Sargon II, Part I, Letters from Assyria and the West, SAA, I, Helsinki, 1987, No. 11.
22. ԼԱ, տող 132:
23. F. Malbran–Labat, op. cit., s. 156–158. Հայտնի են տեքստեր, որոնցում խոսվում է sukkallu–ին ենթակա զնդապետների մասին: Տես, օրինակ, amēlrab kiṣir MEŠ šá amēlsukalli նախարարի(ն ենթակա) զնդապետները (L. Waterman, RCAE, No. 505).
24. S. Dalley, "Iraq", vol. XLVII, 1985, pp. 31–32.
25. G. B. Lanfranchi, S. Parpola, The Correspondence of Sargon II, Part II, Letters from the Northern and Northeastern Provinces, SAA, V, Helsinki, 1990, No.

277. Թերևս նաև SAA. V, No. 201–ը, որի խիսա եղծված տեքստում հիշատակվում են Շարրու–էմուրանին և Արզուխինայի նահանգապետը:

26. A. Fuchs, S. Parpola, The Correspondence of Sargon II, Part III: Letters from Babylonia and the Eastern Provinces, SAA, XV, 2001, No. 48.

27. S. Dalley, "Iraq", vol. XLVII, 1985, p. 32; A. K. Grayson. Assyrian Rule of Conquered Territory in Ancient Western Asia, in "Civilizations of the Ancient Near East" (Editor–in–Chief J. M. Sasson), vol. II, 1995, p. 960. Ցավոք, այս, ինչպես նաև ասորեսաանյան բանակի միավորումներին վերաբերող մի քանի աղբյուրներ (S. M. Dalley, J. N. Postgate, The Tablets from Fort Shalmaneser, "Cuneiform Texts from Nimrud 3", Oxford, 1984) մնացին մեզ անմատչելի: Դրանց տվյալները հայտնի են մասնագիտական գրականության մեջ առկա հղումներից:

28. Սարգոնյան դարաշրջանում քաղդեական ուժեր են տեղաբաշխվել Ասորեստանի մայրաքաղաքներից Կալխուի մերձավորությամբ (S. Dalley, "Iraq", vol. XLVII, 1985, p. 32): Ասորեսաանյան զեկուցագրերից մեկում հիշատակվում են այս և նմանակազմ զորքերը՝ մայրաքաղաքների pirru–միավորումների տեսքով (3 pir–ra–ni sá ᵐKal–ḫi šá ᵐNi–nu–a šá ᵐDur–Sharru–ukin): Տես L. Waterman, RCAE, No. 440.

29. J. N. Postgate, "Iraq", vol. LXII, 2000, pp. 106–107.

30. Հմմտ. И. М. Дьяконов, АВИИУ, 49, прим. 38.

31. J. N. Postgate, "Iraq", vol. LXII, 2000, p. 101.

32. S. Dalley, "Iraq", vol. XLVII, 1985, p. 38f. (աղբյուրների հղումներով).

33. Ուրարտական բանակի «արքայական գնդի» երկակի հիշատակում է պահպանել «Լուվրի աղյուսակը» (LU, տող 171, 191): «Գնդապետ» (rab kisri) աստիճանով ուրարտական զինվորական է հայտնի ասորեստանցի Աշշուր–ռիծոայի զեկուցագրից (L. Waterman, RCAE, No. 144; G. B. Lanfranchi, S. Parpola, SAA, V, No. 91).

34. SAA, V, No. 87–ում (տող 13), մասնավորապես, հիշատակվում են ուրարտական բանակի pirru–միավորումների երեք հրամանատարներ (3 LU. EN pir–ri):

35. LU, տող 333, ուր նշվում է ասորեսաանյան նահանգապետներին և նրանց գնդերին ուղղված Սարգոնի ինչ–որ հրամանի մասին:

36. Չի բացառվում նաև Պարսուայի և Բիթ–Խամբանի զորքերի մասնակցությունը արշավանքին: Երկու նահանգներն էլ հիշատակվում են մեր նշած աղբյուրներում (SAA, V, No. 199, ln. 12; No. 200, ln. 17), թեև ուղղակի մասնակցության մասին չի նշվում:

37. L. Waterman, RCAE, No. 312; G. B. Lanfranchi, S. Parpola, SAA, V, No. 200.

38. LU, տող 11–12:

39. L. Waterman, RCAE, No. 311; G. B. Lanfranchi, S. Parpola, SAA, V, No. 199. Այս ժամանակաշրջանը ներկայացնող հրրոդ զեկուցագիրը, որի հեղինակը հայտնի չէ, վերաբերում է Արզուիինայի զորքերին: Տես G. B. Lanfranchi, S. Parpola, SAA, V, No. 277.

40. Н. В. Арутюнян, Топонимика Урарту, Ереван, 1985, с. 172–173.

41. Զամաայի նահանգապետ Աղադ-իսսիյայի՝ Սարգոնին ուղղած զեկուցագրում նշվում է նրա հրամանատարության տակ գտնվող առկա ուժերի թվաքանակը՝ 1430՝ ներառյալ սպասարկող անձնակազմը (G. B. Lanfranchi, S. Parpola, SAA, V, No. 215. Առավել մանրամասն տես և համեմատիր J. N. Postgate, "Iraq", vol. LXII, 2000, pp. 89–90):
42. J. N. Postgate, "Iraq", vol. LXII, 2000, p. 90, lns. 6–7. Հմմտ. G. B. Lanfranchi, S. Parpola, SAA, V, No. 215 (lns. 6–7).
43. A. Fuchs, Die Inschriften Sargons II. aus Khorsabad, Cuvillier, Verlag, Göttingen, 1994, S. 224, Z. 116–117 (S. 349).
44. W. Manitius, ZA, Bd. XXIV, 1910, S. 129.
45. G. B. Lanfranchi, S. Parpola, SAA, V, p. XXVII
46. A. K. Grayson, Assyrian Rulers of the Early First Millennium BC, (858–745 BC), The Royal Inscriptions of Mesopotamia: Assyrian Periods, vol. III, Toronto, 1996, p. 39 (ln. 25) ; p. 53 (lns. 15–16).
47. Կիմմերական արշավանքին մասնակից մարզպետների թիվը արվում է ըստ А. И. Иванчик, Киммерийцы и Урарту накануне восьмого похода Саргона II, ВДИ, 1990, №. 3, с. 3—19 ուսումնասիրության (էջ 5):
48. Այս թիվը պահպանվել է արքունիք ուղղված ասորեստանցի Աշշուր-ռիծուայի զեկուցագրում: Խոսքը վերաբերում է ուրարտական մարզպետ Սեթինուի զորագնդին, որում ընդգրկված էին 3.000 հետևակայիններ (^{LÚ}ERIM.MEŠ GIR.2.MES) ՝ իրենց (^{LÚ}GAR–ով) և, այսպես կոչված kallāpu զորքերի հրամանատարներով (^{LÚ}GAL kal–lab.MES): Տես L. Waterman, RCAE, No. 380; G. B. Lanfranchi, S. Parpola, SAA, V, No. 88.
49. Ասորեստանյան զեկուցագրերից մեկում, որը վերաբերում է կիմմերա–ուրարտական ընդհարմանը հաջորդած ժամանակահատվածին, խիստ վնասված հատվածում հիշատակվում են ուրարտական բանակի 8.000 զինվորներ (SAA, V, No. 92, rev., ln. 3): Ուրարտական աղբյուրների համաձայն, Քարշուա արշավող բանակի թվակազմը (հեծյալ և հետևակ) հասել է, ըստ տարբեր հրատարակիչների, 12.078 զինվորից (Н. В. Арутюнян, Корпус урартских клинообразных надписей (КУКН), Ереван, 2001, 35, лиц. стор., текст I, стк. 14—15) մինչև 31.878 (F. W. König, Handbuch der chaldischen Inschriften, I–II, 1955–1957, Graz, Nr. 7, Tafel 7) և անգամ 61.978 զինվորի՝ 106 մարտակառքով (P. E. Zimansky, Ecology and Empire: The Structure of the Urartian State, SAOC, No. 41, 1985, Chicago, p. 56f. /Table 6, nt. B/): Վիաերուխի, Լուշա և Կատարգա ցեղապետությունների դեմ ուղղված արշավանքում ուրարտական բանակն ունեցել է 66 մարտակառք, 15.760 հետևակային և նվազագույնը 1.460 հեծյալ (КУКН, 32, стк. 13—14; 33, стк. 15—17): Ցավոք, և մեկ, և մյուս դեպքում վիմագրերն ունեն էական վնասվածքներ, ինչը թույլ չի տալիս հստակ նշել արշավող բանակի թվակազմը: Հարկ է նաև նկատի ունենալ, որ նշված թվերը վերաբերում են Իշպուինիի և Մենուայի համատեղ կառավարման ժամանակաշրջանին, այսինքն՝ ուրարտական պետության վերելքի սկզբնական փուլին: Պետության հզորության շրջանում ուրարտական բանակը պետք է որ ունենար թվակազմի էական աճ՝ սեփական և այլ ռեսուրսների հաշվին (ենթակա երկրների զորքեր, վարձկան ուժեր են):

50. ԼԱ, տող 138:
51. L. Waterman, RCAE, No. 444; G. B. Lanfranchi, S. Parpola, SAA, V, No. 87.
52. L. Waterman, RCAE, No. 506; G. B. Lanfranchi, S. Parpola, SAA, V, No. 21.
53. ԼԱ, տող 140:
54. ԼԱ, տող 105, 138, 139:
55. ԼԱ, տող 136:
56. ԼԱ, տող 289:
57. ԼԱ, տող 289:
58. ԼԱ, տող 131:
59. ԼԱ, տող 136, թերևս նաև տող 104–ը, որն ունի վնասված հատվածներ:
60. ԼԱ, սաղ 85, 131:
61. ԼԱ, տող 85:
62. E. Özgen, Urartian Chariot Reconsidered: I. Representational Evidence, 9th – 7th Centuries B. C., "Anatolica", vol. 10, 1983, pp. 111–131; II, Archaeological Evidence, 9th – 7th Centuries B. C., "Anatolica", vol. 11, 1984, pp. 91–154; R. Merhav (ed.), Urartu. A Metalworking Center in the First Millennium B. C. E., Jerusalem, 1991; U. Seidl, Urartu as a Bronzeworking Centre, in J. Curtis (ed.), Bronzeworking Centres of Western Asia c. 1000–539 B. C., L. –N. Y., 1988, pp. 169–175; P. E. Zimansky, Ancient Ararat: A Handbook of Urartian Studies, pp. 210–214 (նշված գրականությունը) և այլուր:
63. L. Waterman, RCAE, No. 515; G. B. Lanfranchi, S. Parpola, SAA, V, No. 164. Աղբյուրի նշած տեղեկությունները ժամանակագրորեն համապատասխանում են ԼԱ–ի 79–90–րդ տողերում նկարագրված անցքերին:
64. ԼԱ, տող 51–54:
65. Տեքստում նշվում է. «(Արքային՝ տիրոջս, քո ստրուկ Շարրու–էմուրանին) ...քանի որ արքան՝ իմ տերը, ասել էր, – «Բել–իդդինի որդին թող գա քեզ հետ», – թող գա նա զորքերով...»: Ըստ հրատարակիչների, խոսքը միանշանակ վերաբերում է Ալլաբրիայի արքայիկ Բել–ապալ–իդդինի որդուն: Մեկ այլ տեքստում Շարրու–էմուրանին Սարգոնին դժգոհություն է հայտնում Բել-իդդինի որդու կապակցությամբ, որն ասորեստանյան ճամբար էր ուղարկել անփորձ երիտասարդների՝ երկրում պահելով լավագույն զինվորներին (SAA, V, No. 200):
66. A. K. G. Kristensen, Who were the Cimmerians and where did they come from? (translated from the Danish by J. Læessoe), Copenhagen, 1988, p. 42ff. ; G. B. Lanfranchi, S. Parpola, SAA, V, p. XX և այլոք:
67. H. W. F. Saggs, "Iraq", vol. XXV, pt. 2, 1963, p. 153; J. B. Smith, AIA 3, 1994, pp. 231–232.
68. К. Л. Оганесян, ИФЖ, 1966, № 3, с. 115 сл. ; он же: ВОН, 1985, № 11, с. 71 сл.
69. H. W. F. Saggs, "Iraq", vol. XXV, pt. 2, 1963, p. 153.
70. Տես նաև H. W. F. Saggs, "Iraq", vol. XXV, pt. 2, 1963, pp. 151–152.
71. Տես նաև C. von Clausewitz, On War, Princeton, 1976, pp. 245–246.
72. ԼԱ, տող 139: Հմմտ. H. W. F. Saggs, "Iraq", vol. XXV, pt. 2, 1963, p. 152; К. Л. Оганесян, ИФЖ, 1966, № 3, с. 115–116, рис. 2; он же: ВОН, 1985,

№ 11, с. 72–73, схема 1; J. B. Smith, AIA 3, 1994, pp. 231–232, figs. 22. 1 – 22. 2. 1, 22. 4. 2 – 22. 5. 1.

73. Հմմտ. H. W. F. Saggs, "Iraq", vol. XXV, pt. 2, 1963, p. 153; К. Л. Оганесян, ИФЖ, 1966, № 3, с. 116–117, рис. 2; он же: ВОН, 1985, № 11, с. 72–74, схема 1; J. B. Smith, AIA 3, 1994, pp. 231–232, figs. 22. 4. 1, 22. 5. 2 – 22. 6. 1.

74. ԼԱ, տող 125–147:

75. Սանրամասները տես Ռ. Լ. Մանասերյան, Տիգրան Մեծ. Հայաստանի պայքարը Հռոմի և Պարթևստանի դեմ, Երևան, 1987, էջ 150–157:

76. ԼԱ, տող 137–138: